

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱԼԼԱՔՅԱՆ Վ. Կ.

ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ  
ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼԸ՝ ՈՐՊԵՍ  
ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ  
ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

ԵՐԵՎԱՆ - 2015

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Դալլաքյան Վահագն Կոլյայի**

**ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ  
ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼԸ՝  
ՈՐՊԵՍ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ  
ԿԱՏԱՐՄԱՆ ՍԻՋՈՑ**

**Երևան  
Հայրապետ հրատարակչություն  
2015**

ՀՏԴ 343.272: 347.952

ԳՄԴ 67.411+67.410

Դ 133

***Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ իրավագիտության  
ֆակուլտետի գիտական խորհուրդը***

Խմբագիր՝ իրավաբանական գիտությունների թեկնածու,  
րոցենտ **Վ.Վ. Հովհաննիսյան**

**Դալլաքյան Վ.**

Դ- 133 Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ որպես  
դատական ակտերի հարկադիր կատարման միջոց / Վ.Կ.  
Դալլաքյան: ԵՊՀ.- Եր.: Հայրապետ հրատ., 2015.-160 էջ:

Մենագրությունը նվիրված է պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու՝ որպես դատական ակտերի հարկադիր կատարման միջոցի տեսական ու գործնական մի շարք հիմնահարցերի հետազոտությանը: Աշխատանքում իրավագիտության մի քանի ճյուղերի ձեռքբերումների համալիր կիրառմամբ վերլուծվել են հարկադիր կատարման միջոցների, և մասնավորապես՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու նյութաիրավական և դատավարական հիմքերը, դրանց կիրառման սահմանները, բռնագանձումը կազմող կատարողական գործողությունները, ինչպես նաև բռնագանձման առանձնահատկություններն ըստ պարտապանների: Հետազոտության հիման վրա հեղինակը ներկայացրել է բազմաթիվ տեսական եզրահանգումներ, կատարողական վարույթը կարգավորող իրավական նորմերի մեկնաբանման, կիրառման և բարեփոխման վերաբերյալ գործնական առաջարկություններ:

Աշխատությունը նախատեսված է իրավաբանական բուհերի և ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների և դասախոսների համար: Այն կարող է օգտակար լինել նաև դատավորների, փաստաբանների, հարկադիր կատարողների, իրավաստեղծ գործունեությանը մասնակցող իրավաբանների, ինչպես նաև կատարողական վարույթի խնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար:

ՀՏԴ 343.272: 347.952

ԳՄԴ 67.411+67.410

ISBN 978-9939-838-25-0

© Դալլաքյան Վ., 2015

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԱԽԱԲԱՆ.....	4
<b>ԳԼՈՒԽ I. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ՝ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ.....</b>	<b>8</b>
§ 1. Հարկադիր կատարման միջոցների ընդհանուր իրավաբանական էությունը.....	8
§ 2. Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու էությունը և նյութաիրավական հիմքերը.....	32
<b>ԳԼՈՒԽ II. ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ. ԲՈՆԱԳԱՆՁՈՒՄԸ ԿԱԶՄՈՂ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....</b>	<b>45</b>
§ 1. Պարտապանի գույքի բացահայտումը և արգելադրումը. արգելանքի իրավաբանական բնույթը.....	45
§ 2. Արգելադրված գույքի իրացումը և բռնագանձված գումարների բաշխումը .....	82
<b>ԳԼՈՒԽ III. ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ .....</b>	<b>110</b>
§ 1. Ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքի վրա բռնագանձում տարածելու կանոնների հարաբերակցությունը .....	110
§ 2. Հայաստանի Հանրապետությունից դրամական միջոցների բռնագանձման հիմնախնդիրները.....	126
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>	<b>149</b>

## ՆԱԽԱԲԱՆ

Գատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետ կառուցակարգն անձանց իրավունքների պաշտպանության օղակներից է, որի պատշաճ գործողության ապահովումը պետության պարտականությունն է: Սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության շղթայում կատարողական վարույթն ունի համակարգային նշանակություն, քանի որ դրա թերի գործառնման պարագայում ակնհայտորեն կնվազի իրավունքների պաշտպանության գրեթե բոլոր ձևերի արդյունավետությունը: Գատական ակտերի հարկադիր կատարման գործուն կառուցակարգը կոչված է ապահովելու պահանջատիրոջ այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, իսկ գույքային պահանջների դեպքում՝ նաև սեփականության պաշտպանության իրավունքը: Միաժամանակ, դատական ակտերի հարկադիր կատարման ընթացակարգը խստորեն պետք է համապատասխանի նաև պարտապանի իրավունքների պաշտպանության պահանջներին:

Չնայած իրավական ողջ համակարգի համար կատարողական վարույթի այսպիսի համակարգային և կարևոր նշանակությանը՝ 1998թ. «Գատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի<sup>1</sup> ընդունումից ի վեր այս ոլորտը Հայաստանում մեծ հաշվով դուրս է մնացել ինչպես տեսական հետազոտությունների, այնպես էլ՝ օրենսդրական քաղաքականության ուշադրությունից: Տեսական ուսումնասիրությունների արդյունքները սահմանափակվել են հիմնականում դասագրքային նյութերով<sup>2</sup>: Ունենալով մի շարք թերություններ և բացեր՝ ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքն

<sup>1</sup> Ընդունվել է 05.05.1998թ., ՀՕ-221, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.06.15/12(45), այսուհետ՝ ԴԱՀԿ մասին ՀՀ օրենք:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն (իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ. Հ. Ղարախանյանի խմբագրությամբ): - Երրորդ հրատարակություն - Եր.: Երևանի համալսարանի հրատ., 2007, հինգերորդ բաժին:

ընդունումից հետո մինչ օրս դուրս է մնացել նաև դատախիզավական ակտիվ բարեփոխումներից. օրենքում կատարված փոփոխությունները կամ կրել են հատվածական բնույթ, կամ ածանցյալ են եղել այլ օրենքներում կատարված փոփոխություններից: Արդյունքում, օրենքի կիրառության ընթացքում կուտակված և օրենսդրական լուծում պահանջող հարցերի մեծամասնությունը մնում է չլուծված: Նման իրավիճակի հիմնական պատճառներից մեկն էլ, թերևս, տեսական անհրաժեշտ հենքի բացակայությունն է:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ դատական ակտերի հարկադիր կատարման մասին գործող օրենսդրությունն ընդունվել է սեփականության բազմաձևությանը և շուկայական տնտեսավարմանն անցման պայմաններում: Տնտեսական նոր հարաբերությունները չէին կարող օրենսդրական կարգավորման նոր խնդիրներ չառաջադրել, ուստի այդ առումով առավել մեծ արդիականություն է ձեռք բերում հարկադիր կատարման այնպիսի միջոցի հետազոտությունը, ինչպիսին է պարտապանի դրամական պարտավորություններով նրա գույքի վրա բռնագանձում տարածելը, քանի որ այն անմիջապես առնչվում է իրավունքի սուբյեկտների սեփականությանը և տնտեսական գործունեությանը:

Պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու հիմնական խնդիրները, որոնք հետաքրքրություն են ներկայացնում տեսական, օրենսդրության կատարելագործման և գործնական կիրառման տեսանկյուններից, հանգում են հետևյալին:

Նախ, հարկադիր կատարման ամբողջ ընթացակարգը կանխորոշում է այն հարցադրումը, թե արդյոք հարկադիր կատարման միջոցները կատարողական օրենսդրության կողմից սահմանվող ինքնավար ինստիտուտներ են, թե դրանք, այնուամենայնիվ, սահմանափակված են որոշակի նյութախիզավական նորմերով: Այսինքն՝ որո՞նք են կիրառվող հարկադրանքի սահման-

ները և կիրառման ընդհանուր պայմանները:

Երկրորդ, բռնագանձումը տևական գործընթաց է, և դրա առանձին տարրերի կիրառումը տարբեր նյութաիրավական հետևանքներ է առաջացնում պահանջատիրոջ և պարտապանի, ինչպես նաև բռնագանձվող գույքի նկատմամբ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է որոշել այդպիսի նյութաիրավական հետևանքների բնույթն ու սահմանները: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է գույքի արգելադրման արդյունքում պարտապանի սեփականության իրավագործությունների սահմանափակման ծավալին, այդ սահմանափակումների գործողության ժամանակային ասպեկտին, արգելադրված գույքի ապօրինի օտարման դեպքում պահանջատիրոջ իրավունքների պաշտպանությանը և այլ հարցերի:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում արգելադրված գույքի իրացման հարաբերությունները, քանի որ այստեղ, պահանջատիրոջից և պարտապանից բացի, նյութաիրավական շահեր ունեն նաև սակարկությունների մասնակիցները և գույքի գնորդը: Մինչդեռ, աշխատանքում ներկայացված հետազոտությունը ցույց է տալիս, որ ՀՀ գործող օրենսդրությունը ոչ բոլոր դեպքերում է ապահովում այս բոլոր սուբյեկտների իրավունքների համակողմանի պաշտպանության հնարավորություն:

Վերջապես, նաև իրավունքի տնտեսական ազդեցության տեսանկյունից խիստ արդիական են պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելիս նրա գործարարական գործունեության իրավական պաշտպանության հարցերը: Մասնավորապես, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դրամական և շրջանառու միջոցների վրա բռնագանձում տարածելու գործող կանոնների կիրառումը պրակտիկայում հաճախ հարցականի տակ է դնում տնտեսվարող սուբյեկտի հետագա գործունեությունն ընդհանրապես՝ նույնիսկ այն դեպքերում, երբ պարտապանն անվճարունակ չէ և ունի պարտավորության հարկա-

դիր կատարման համար բավարար գույք: Կատարողական վարույթի բնագավառում իրավագիտական հետազոտությունների կարևոր խնդիրներից է այնպիսի միջոցների մշակումը, որոնք հնարավոր նվազագույն խոչընդոտները կառաջացնեն պարտապան տնտեսվարող սուբյեկտների գործունեության համար՝ միաժամանակ չվնասելով կատարողական վարույթի առաջնային նպատակին՝ պահանջատիրոջ պահանջի բավարարմանը:

Ներկայացվող աշխատությունը նվիրված է, նախ, վերը նշված և հարակից մի շարք այլ խնդիրներ վեր հանելուն և ձևակերպելուն, և, այնուհետև, դրանց համակողմանի հետազոտությանը և լուծումների մշակմանը: